ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 30
<< 15>> օգոստոսի 2019 թ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքով ,ՀՀ կառավարության 29.12.2005 թ. թիվ 2387-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Անահիտ Մանուկյանի սեփականություն հանդիսացող 06-103-0026-0005 ծածկագրի 0,19498 հա տնամերձ հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2. Ճանաչել Անահիտ Մանուկյանի սեփականության իրավունքը 06-103-0026-0005 ծածկագրի 0,19498 հա տնամերձ հողամասի և հողամասի վրա գտնվող 392,78 քմ ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունների նկատմամբ:
3. 06-103-0026-0005 ծածկագրի 0,19498 հա տնամերձ հողամասին և տանը տրամադրել Վահագնի համայնք 4-րդ փողոց 1-ին փակուղի 15 փոստային հասցեն:
4. Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների և պարտականությունների պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:
5. Ուժը կորցրած ճանաչել Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թ. հունիսի 28-ի թիվ 21 որոշումը:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ